Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի 2018 թ.
օգոստոսի 31-ի N 156 - Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

Կովկասի Բնության Հիմնադրամի, ՀՀ բնապահպանության նախարարության և «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի միջև 2018թ. մարտի 28-ին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2018 թվականի

1.	**Ծրագրի նպատակը**	Հակահրդեհային նպատակով հատուկ տեխնիկայի (ջրի բաքով, պոմպով և այլ հակահրդեհային անհրաժեշտ սարքավորումներով հագեցած պիկապ ավտոմեքենաների), հատուկ հակահրդեհային արտահագուստի ձեռքբերում և սեփականության իրավունքով փոխանցում «Խոսրովի անտառ պետական արգելոց» և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ներին:
2.	**Ծրագրի բարեգործական որակման նպատակը**	Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնու–թյուններից՝ բարեգործի պահանջով, «Բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի միջև 2018թ. մարտի 28-ին կնքված դրամաշնորհային պայմա–նագրի 8-րդ կետի համաձայն:
3.	**Բարեգործը**	Կովկասի Բնության Հիմնադրամ Թուլպենհոֆշտրասսե 18, 63067, Օֆֆենբախ, Գերմանիա
4.	**Ծրագիրը կատարողը**	Ծրագրի իրականացնողն է Կովկասի Բնության Հիմնադրամը: «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը հանդիսանում է ծրագրի կատարման օպերատորը՝ գնումների իրականացման մասով:
5.	**Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը**	ՀՀ Արարատի և Տավուշի մարզեր, Շրջակա միջավայրի պահպանություն
6.	**Ծրագրի բյուջեն**	Կովկասի Բնության Հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի բյուջեն կազմում է **59 512 000 ՀՀ դրամ**: Ծախսերի ուղղությունները և չափերը՝ ըստ կետ 9-ի:
7.	**Բարեգործություն ստացողը**	«Խոսրովի անտառ պետական արգելոց» և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ներ:
8.	**Ծրագրի իրականացման տևողությունը**	10.07.2018 – 31.12.2018թթ.

9.	**Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը**	Կովկասի Բնության Հիմնադրամի, ՀՀ բնապահպանության նախարարության և Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի միջև 2018 թվականի մարտի 28-ին կնքված դրամաշնորհի տրամադրման մասին պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2018 թվականի ծրագիր՝ 10.07.2018 - 31.12.2018թթ. – **59 512.0 հազար ՀՀ դրամ,** այդ թվում՝ 1. Ամենագնաց պիկապ ավտոմեքենաների ձեռքբերում (որպես հակահրդեհային ավտոմեքենա վերափոխելու նպատակով)՝ 4 հատ (3-4-րդ եռամսյակ) – **54 500.0 հազար ՀՀ դրամ:** 2. Վերափոխման նպատակով համալրող տեխնիկական սարքավորումների ձեռքբերում (3-4-րդ եռամսյակ) - **1464.0 հազար ՀՀ դրամ**, այդ թվում. • ջրի բաք՝ 1 տոննա տարողությամբ, 4 հատ - **300.0 հազար ՀՀ դրամ,** • բենզինային շարժիչով պոմպ՝ 4 հատ - **348.0 հազար ՀՀ դրամ,** • մեքենաների համար նախատեսված առաջին բուժօգնության պարագաներ - **64.0 հազար ՀՀ դրամ,** • ղեկի ձգանների պաշտպանիչ՝ 4 հատ - **200.0 հազար ՀՀ դրամ,** • փոխանցման տուփի պաշտպանիչ՝ 4 հատ - **200.0 հազար ՀՀ դրամ,** • այլ պարագաների (փողրակ ռետինե, կցոն-անցում, գործիքների հավաքածու, կցոն-անցում եռաբաշ, փական) ձեռքբերում - **352.0 հազար ՀՀ դրամ:** 3. Հատուկ արտահագուստի ձեռքբերում /կիսաճտքավոր կոշիկ և համազգեստ/ (3-4-րդ եռամսյակ) – **1 920.0 հազար ՀՀ դրամ**: 4. Կոնստրուկցիայի հավաքման և տեղադրման ծառայություն (3-4-րդ եռամսյակ)–**1628.0 հազար ՀՀ դրամ:**
10.	**Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը**	1. Ամենագնաց պիկապ ավտոմեքենաների ձեռքբերում (առնվազն 900 կգ բեռնատա–ողությամբ՝ որպես հակահրդեհային ավտոմեքենա վերափոխելու նպատակով) – **54 500.0 հազար ՀՀ դրամ** (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում): 2. Վերափոխման նպատակով համալրող տեխնիկական սարքավորումների ձեռքբերում – **1 464.0 հազար ՀՀ դրամ** (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում): 3. Հատուկ արտահագուստի ձեռքբերում (կիսաճտքավոր կոշիկ և համազգեստ) - **1920.0 հազար ՀՀ դրամ** (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում): 4. Կոնստրուկցիայի հավաքման և տեղադրման ծառայություն (3-4-րդ եռամսյակ)–**1628.0 հազար ՀՀ դրամ** (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում):
11.	**Ծրագրի իրականացման հետ կապված**	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:

	կազմակերպչական ծախսերը	
12.	**Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ**	Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի և ՀՀ բնապահպանության նախարարության հետ:
13.	**Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը**	Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին, ՀՀ բնապահպանության նախարարությանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով լիազոր մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ